

ԽՈՅ ԳԱԽԱՌԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Խոյ գաւառի դէրժը և սահմանները. կլիման, ոռոգումը. ջրեր.—Ղոթուր—չայը, աղբիւրներ. բերքը և պտղաբերութիւնը. աղի հանք, տաք ջրեր:

Ատրպատականի մոռացուած անկիւններից մէկն է Խոյ գաւառը: Այդ անկիւնում ապրում է մի բուն հայ ժողովուրդ, հայութեան այլանդակուած մի բեկոր: Նա, խոյեցի հայը՝ թշուառ է և հարստահարուած, նա ծեծկում է և օրէցօր կորցընում իր ազգային առանձնայատկութիւնները: Բայց ի՞նչ գիտէ ընթերցող հայ հասարակութիւնը այդ կերպարանափոխուած հայերի մասին:—Համարեա ոչինչ:

Շատ հետաքրքիր է այդ անկիւնը. նա ունի շօշափելու շատ հարցեր և խնդիրներ, իրական կեանքը տալիս է ուսումնասիրողին մի շարք նիւթեր: Մենք կ'աշխատենք մեր ընթերցողներին ծանօթացնել Ատրպատականի այդ մոռացուած անկիւնի հետ:

Խոյը ընկնում է Ատրպատականի հիւսիս-արեւմտեան կողմում. նրա սահմանակից գաւառներն են. հարաւից՝ Սալմաստը, հիւսիսից՝ Մակուի խանութիւնը, արեւմուտքից նա ձգւում է մինչև օսմանեան կառավարութեան սահմանները, իսկ արեւելքից տարածւում է համարեա մինչև Ղարադաղի սահմանները: Ահա այդ տարածութեան վրայ է ընկնում Խոյ գաւառը: Խոյը կազմում է Արտազ գաւառի շարունակութիւնը և բռնում է նրա հարաւային մասը, որը բաւականին ցածր է և խորը ընկած: Դա մի ընդարձակ և տափարակ ձոր է, որի չորս կողմերից էլ բարձրանում են լեռներ և բլուրներ: Բարձր չեն այդ լեռները. բացի Աւրուն, Զէյլխանա և Ղոթուրի սարերից՝ միւսները ցածր

բլուրներ են: Մերկ և չոր են այդ լեռները, միանգամայն զուրկ կանաչ ծիլից. միայն մի քանի տեղ, լեռների լանջերի վրայ տեսայ կանաչ բուսականութիւն իրրև օազիս ընդհանուր աճայութեան մէջ: Այսպէս է ոչ միայն Խոյում, այլ գրեթէ Ատրպատականի բոլոր մասերում: Թաւրիզից Խոյ գնալիս անցընում էք անազին տարածութիւններ, կտրում անցնում էք լեռներ և բլուրներ, բայց լերկ են բարձրութիւնները, չոր, ամայի է հարթութիւնը:

Ասացի, որ Խոյի բռնած տեղը խոր է, ցածր: Այդ խորութիւնը պարզ և որոշ նկատուում է մանաւանդ սահմանակից բլուրներից դիտելիս, իսկ Մակու գնալիս շատ զգալի է լինում, որովհետև հետզհետէ բարձրանում էք: Անշուշտ հէնց այս հանգամանքին կամ գաւառի ցածրութեանը պիտի վերագրել այն, որ ամառները Խոյում սաստիկ շոգեր են լինում: Այս ամառ մի քանի օր այնպիսի շոգեր արեց, ասես բոցեր և կրակ էր թափու՞մ երկնքից, այն ինչ Սալմաստում, որը աւելի հարաւ է, շատ աւելի մեղմ է լինում ամառը: Այնպէս որ անտանելի կը լինէր ամառները Խոյում ապրելը, եթէ չը լինէր զով քամին, որ երեկոները միշտ փչում է սարերից: Ընդհանրապէս վերցրած՝ Կլիման բարեխառն է և օդը մաքուր:

Որքան խեղճ, որքան չոր է բուսականութիւնը շրջապատող բարձրութիւնների վրայ, նոյնքան ճոխ, նոյնքան հարուստ և փարթամ է ամբողջ հարթութեան վրայ: Ամբողջ Խոյ գաւառում չը կայ մի թէկուզ փոքրիկ անկիւն, որ բոլորովին զուրկ լինի կանաչից: Ընդարձակ տարածութիւնը ծածկուած է բազմաթիւ գիւղերով, իւրաքանչիւր գիւղ շրջապատուած է մեծ և հարուստ այգիներով, ունի իր չափ արտեր,—հողը բերրի է և ուժեղ, ջուրն էլ առատ:

Խոյի աչքն է կազմում Դաղ-բաղին, որը գտնուում է քաղաքի հարաւային կողմը, մօտ մէկ վերստ հեռաւորութեան վրայ: Դա մի ընդարձակ և միլենոյն ժամանակ հրաշալի այգի է, ունի զանազան ալլէյներ, մէջը կայ աղբիւր, որի ջուրը վճիտ և առողջարար է, իսկ ամբողջ այգին ծածկուած է կանաչով, մեծ և փոքր ծառերով, թեթև և դուրեկան քամին էլ հօ անպակաս է: Դաղ-բաղին հիանալի զօսատեղի է. քաղաքացիները յաճախ գնում են այնտեղ, և գնում են ընտանիքով, կարգին պատրաստութիւններով և մնում են այնտեղ ամբողջ օրը: Գնում են ոչ միայն քաղաքի բնակիչները, այլ և մօտիկ գիւղացիները. այնպէս որ Դաղ-բաղին հոշակուած է ամբողջ գաւառում: Ամեն մի ճանապօրդ, ամեն մի օտարական Խոյ գալիս անհրաժեշտօրէն առաջին անգամ այցելում է Դաղ-բաղին, և ուրիշ կերպ էլ չի

կարող լինել, քանի որ միշտ գրաւիչ պատմութիւններ կը լսի նրա մասին: Ճիշտ է, խոյ գաւառում շատ կան գեղեցիկ, կանաչկոտ վայրեր, բայց դրանցից ոչ մէկը չ'ունի Դադ-բաղու գրաւչութիւնը, նրա յարմարութիւնները և գեղեցկութիւնը: Ճոխ և գեղեցիկ է բնութիւնը խոյ գաւառում, որովհետև առատ է նրա ջուրը և բերրի՝ հողը: Խոյը թէև ունի մի հատիկ գետ, բայց նա առատ ջուր է մատակարարում ամբողջ գաւառին: Դոթուր է կոչուում այդ գետը. Դոթուր-չայ են ասում բոլոր թուրքերը, իսկ Տղմուտ գետ՝ հայերը: Խոյ գաւառի արևմտեան կողմում, պարսկա-տաճկական սահմանագլխում կայ մի փոքրիկ գաւառակ, որը շրջապատուած է բարձր լեռներով, որոնք կոչուում են Դոթուր: Ահա այդ լեռներից է սկիզբն առնում Դոթուր-չայը և դրանցից էլ ստացել է իր անունը: Դոթուրը կտրում, անցնում է Խոյի ամբողջ երկարութեամբ, արմուտքից դէպի արևելք, մեծ և փոքր առուներիով ջուր մատակարարում ավ ու ձախ կողմերում գտնուած գիւղերին և այսպիսով ոռոգում բովանդակ գաւառը:

Ջրի պակասն այս գաւառում լրացնում են աղբիւրները, որոնք այնքան շատ են այս կողմերում: Մաքուր, յստակ և առողջար է աղբիւրների ջուրը. ազգաբնակչութիւնը իր խմելու ջուրը վերցնում է այդ աղբիւրներից, որովհետև Դոթուրի ջուրը խմելու համար այնքան էլ լաւ չէ: Մեծ է Խոյի գանազան կողմերում եղած աղբիւրների թիւը. ամեն մի քայլափոխում դուք պատահում էք աղբիւրի, որից բղխում է լաւ և անուշ ջուր. իւրաքանչիւր գիւղ ունի մէկ, երկու և աւելի աղբիւրներ, ինչպէս օրինակ Մէջգաւարը, որը ունի շատ անուշ ջուր և գտնուում է Խոյի հիւսիս-արևմտեան մասում: Մէջգաւարը աղբիւրների մի ցանց է, որ բռնել է գետնի այդ ամբողջ մասը. և դրանք բացի ազգաբնակչութեանը համեղ ջուր մատակարարելուց՝ մեծ դեր են խաղում և գետնի ոռոգման գործում: Յայտնի աղբիւրներից են համարում նաև Ջրղըլա-բուլաղ (երկրաշարժի աղբիւր), Խոշ-բուլաղ (քաղցր աղբիւր) և այլն:

Աղբիւրներից պակաս դեր չեն խաղում և քեանրիզները, այսպէս ասած, արհեստական աղբիւրները: Քեանրիզները դեռ շատ հին ժամանակներից սկսած ծանօթ են պարսիկ ժողովրդին և յայտնի դեր են կատարում Պարսկաստանի կեանքի մէջ: Բայց ի՞նչ է քեանրիզը և ի՞նչպէս են շինում: Դա մի առուակ է, որ հոսում է գետնի տակով և ոչ երեսով: Պարսկաստանի համարեա թէ բոլոր մասերում գործածական է այդ ձևի ջրի մատակարարումը: Քեանրիզի ջուրը համարեա նոյնքան մաքուր և լաւ է, որքան աղբիւրի ջուրը:

Ահա այն նպաստաւոր պայմանները, որոնք տալիս են

հարուստ պտղաբերութիւն, չը նայած որ ժողովուրդը դեռ գետինը հերկում, մշակում է իր նախնիների անկարգ միջոցներով: Խոյում ցանում են գլխաւորապէս ցորեն և բամբակ, պակաս չափով դարի, ծխախոտ. լինում են և բոստաններ: Նա շատ հարուստ է պտղի կողմից. խաղող, նուշ, բալ, տանձ, սալոր, խնձոր և այլն, այնքան առատ, այնքան արժան են, որ, ինչպէս ժողովուրդն է ասում, հողի գին է: Խոյը, և շատ իրաւացի, համարւում է դուծմայի (սեխ) աշխարհ:

Խոյ գաւառում կայ և տաք բուժիչ ջուր, որից, բնականաբար, չը գիտեն տեղացիները օգտուել, ինչպէս հարկն է:

Խոյը աղի հանք էլ ունի: Դա մի փոքրիկ բլուր է, որ գտնւում է Խոյի հարաւային կողմը, Սալմաստի ճանապարհի վրայ: Այս էլ պէտք է աւելացնել, որ այդ աղի հանքը այնքան էլ մաքուր չէ, բայց յամենայն դէպս ազգաբնակութեան համար մեծ բարիք է:

Խոյի ազգաբնակութիւնը. Խոյ քաղաքը:—Խոյի կառավարութիւնը. հէքիմ. սարքարաւտ. գիւղատէրեր:—Հարկեր. սէիդներ. պատիժներ. ժողովրդի պարտաւճիռը. ճանապարհները, ^սպոստ, հեռագիր:

Այդ տարածութեան վրայ կան բազմաթիւ գիւղեր: Ինչ ասել կ'ուզի, որ ստատիստիկան միանգամայն բացակայում է այս երկրում, և մարդ շատ անգամ մօտաւոր թւեր անգամ անկարող է լինում առաջ բերել: Խոյի ամբողջ ազգաբնակութիւնը կազմուած է թուրքերից և հայերից. դրանցից զատ ուրիշ ազգութեան պատկանող ժողովուրդներ չը կան այս գաւառում: Թուրքերը, իհարկէ, իրանց թւով բռնում են առաջին տեղը և կազմում են ամբողջ ազգաբնակութեան մեծագոյն բաժինը, ապա գալիս են քիւրդները, իսկ ամենափոքր թիւը կազմում են հայերը:

Ինչպէս անցեալում, նոյնպէս և այժմ գաւառի գլխաւոր քաղաքը համարւում է Խոյը, որը նստած է համարեա ուղիղ գաւառի հարթութեան կրճքի վրայ և շրջապատուած իրար մօտիկ մի շարք գիւղերով: Խոյը բերդաքաղաք է, շրջապատուած հաստ և բարձր պարիսպներով: Այս բերդը համարւում է XVIII դարի գործ:

Ամբողջ Խոյ քաղաքը կազմուած է երկու մասից. մէկ՝ պարիսպների միջի տարածութիւնը, ուր բռնում են բացառապէս թուրքերը, և այդ մասը կոչւում է բերդ, և երկրորդ՝ բեր-

դից դուրս, մօտ 15 րոպէի հեռաւորութեան վրայ, ուր ապրում են հայեր և թուրքեր խառն, որը կազմում է բերդաքաղաքի մի թաղը, հէնց այդ մասը «Թաղ» էլ ասւում է: Խոյ քաղաքը ընդհանրապէս գեղեցիկ դիրք ունի, շրջապատուած է սիրուն ծառուղիներով, որոնց աչքը կազմում է դէպի Սալմաստ տանող ընդարձակ, լայն և գեղեցիկ խիաւանը. ունի գեղեցիկ կանաչկոտ վայրեր, ինչպէս Դաղ-բաղին, լաւ այգիներ: Քաղաքի մէջ զանազան կողմերից ձեղքում անցնում են փոքրիկ առուներ, և բոլորի եզրներումն էլ կան տնկած ուռի և բարդի ծառեր. այդ կողմից հարուստ և գեղեցիկ է մանաւանդ թաղը:

Առաջ, դեռ XVII դարում, Խոյը կազմում էր մի ընդարձակ և ուժեղ խանութիւն, իսկ նրա կառավարիչը՝ խանը համարւում էր միահեծան, անկախ պետ, նա չէր ճանաչում պարսից շահնշահի գերիշխանութիւնը: Իսկ այժմ Խոյը դարձել է Պարսկաստանի ամենասովորական գաւառներից մէկը: Խոյում մնում է մի դատաւոր, հէքիմ, որ համապատասխանում է Կովկասի գաւառապետին և ամբողջ գաւառի կառավարութիւնը յանձնուած է նրան: Պարսկաստանում առհասարակ հէքիմը ոչ միայն կառավարութիւնից ոռճիկ չէ ստանում, այլ այդ պաշտօնը ստանալու համար ինքն է վճարում որոշ գումար: Ուրիշ խօսքով դատավարութիւնը ծախւում է այս կամ այն անհատին, այս կամ այն խանին: Ներկայ դատաւորը, ինչպէս պատմում են, երրորդ անձնաւորութիւնից է գնել: Ատրպատականի բարձրագոյն վարչութիւնից ստացել է մի ուրիշը, նա ծախել է այդ պաշտօնը, իհարկէ՝ անշուշտ օգուտով, մի երկրորդ անձի, իսկ սրանից էլ ստացել է ներկայ դատաւորը: Այս էլ ասեմ, որ Խոյի դատաւորը յաճախ փոխւում է, պաշտօնանկ է լինում*): Խոյի դատաւորը համարւում է նաև Սալմաստի ընդհանուր կառավարիչ:

Ոչ միայն դատավարութիւնը, այլ ամեն ինչ այդպիսի հիմքերի վրայ է հաստատուած Պարսկաստանում: Ահա և սարփարաստութիւնը, որ նոյնպիսի հիմունքների վրայ է դրւում, ինչ և դատավարութիւնը, դեռ աւելի վատթար: Այս պաշտօնն էլ է ծախւում, և ով շատ է վճարում, նա է ստանձնում պաշտօնը: Սարփարաստը համարւում է միայն քրիստոնեանե-

*) «Պաշտօնանկ անելը» յիշեցրեց մի հետաքրքիր և միևնոյն ժամանակ տարօրինակ բան, որը սազ կը դալ միմիայն իրան երկրին: Պաշտօնանկ լինելու դէպքում դատաւորը կառավարութիւնից վրէժ առած լինելու համար շատ անգամ դեռ չը հեռացած բաց է անում բանտի դռները և ազատում է բանտարկեալներին: Այսպիսի դէպք պատահեց և այս տարի, ներկայ դատաւորի նախորդին պաշտօնանկ անելիս: Ահա ձեզ երկիր, ահա ձեզ կառավարութիւն:

ըի պաշտպան, իրօք՝ կեղեքող, հարստահարող: Այս հազիւ կէս դար լինի, որ Պարսկաստանում հաստատուած է այդ պաշտօնը. դա էլ եղել է հէնց քրիստոնեաների, գլխաւորապէս հայերի խնդիրքով: Դեռ յիսունական թւականներին, երբ պարսիկ դատաւորը չէր պաշտպանում քրիստոնեաներին այնպէս, ինչպէս հարկն էր, վերջիններին խնդիրքով նշանակուած է մի առանձին պաշտօնեայ յատկապէս քրիստոնեաների համար: Ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ իւրաքանչիւր քրիստոնեայ տուն վճարում է սարփարաստին տարեկան որոշ տուրք, որպէս ոռճիկ: Այդ ոռճիկով նա, իհարկէ, չէ բաւականանում, այլ փոխանակ մի շարք կեղեքիչներեց պաշտպանելու ժողովրդին, ինքն էլ մի կողմից է կեղեքում, ամենահասարակ առիթը մատի փաթաթան դարձնելով՝ սկսում է տուգանքի ենթարկել հայերին, մի խօսքով հարստահարում, դառնացնում է նրանց առանց այդ էլ անմխիթար կեանքը:

Միանգամայն սխալը այժմ հայերը տարիների ընթացքում չեն կարողանում շտկել: Ճիշտ է, դատաւորի դէմ պաշտպանուելու համար է առաջացել սարփարաստութիւնը, բայց այժմ դատաւորից համեմատաբար աւելի գոհ է ժողովուրդը, քան սարփարաստից: Այժմ բոլոր հայերը դժգոհ են այդ պաշտօնից և միանգամայն աւելորդ են գտնում այն: Մնում է միայն, որ հայ ազգաբնակչութիւնը մի խոհուն, խելացի թեմակալի առաջնորդութեամբ դիմի բարձրագոյն իշխանութեանը և խնդրի այդ պաշտօնը վերացնել. մանաւանդ որ այժմ Խոյ գաւառի սակաւաթիւ հայերը (մօտ 280 տուն) անկարող են մի անկուշտ սարփարաստ պահել: Ատրպատականի հայերը կարող են այդ անել, այսինքն վերացնել սարփարաստութիւնը, եթէ միայն խելացի կերպով լինի դիմումը և ոչ թէ այնպիսի անտակտութեամբ, ինչպէս վարուեց Ե. Վ. Մուրադեանը թերթի իրաւունք խնդրելու գործում...

Դեռ այդ չէ բոլորը. գիւղատէր բեզ-աղաների ճնշումները և կեղեքումները գալիս են աւելի ցաւոտ կերպարանք տալու պատկերին. դրանք տղրուկներ են, որ ամենաանխիղճ կերպով ծծում են ժողովրդի արիւնը: Խեղճ երկրագործը աշխատում, տընում է, չարչարւում գրեթէ ամբողջ օրը արիւն-քրքրտինք թափում, և իր հալալ աշխատանքի ամենահնչին բաժինն է միայն իրան մնում, մնացածը լցւում է աղայի ամբարը: Ցորենից, գարուց, բամբակից և այլն ստանում են աղաները ընդհանրապէս բերքի $\frac{1}{2}$ -ը:

Բացի այդ կայ գլխահարկ, անասունների հարկ. ահա

Նրանց մօտաւոր չափը, որ կարելի է համարել բոլոր գիւղերի համար.

1) Գլխահարկ (տղամարդի) *)	3	դռան.
2) Մատակ գոմշի հարկ . . .	2	» 10 շահի.
3) Կովի » . . .	1	» 5 »
4) Զիւի » . . .	2	» 10 »
5) Էշի » . . .	1	» 5 »
6) Ոչխարի . . . » . . .	—	» 8 » **)
7) Տան » . . .	4	» — »

Ահա այսքան ծանրաբեռնուած են խեղճ գիւղացիները բազմապիսի հարկերով:

Բայց դրանցով դեռ չի վերջանում տղրուկների թիւը, մնում են սէիդները, որոնց ամենայն իրաւունքով կարելի է կոչել Պարսկաստանի «ձրիակեր դասակարգը»: Նրանք ոչինչ չ'անելով՝ ոչ միայն խնդրում են, այլ և պահանջում: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ «մարգարէի ցեղից» են համարուում: Խոյում ընդհանրապէս շատ կրօնաւորներ՝ սէիդներ, մուլաններ կան, հէնց դրա համար էլ Խոյը պաշտօնական թղթերի մէջ յիշուում է «Դարըլ-մոմինին», այսինքն հաւատարիմների, սրբերի վայր: Մի երկու գիւղ կայ, որ զուտ սէիդաբնակ են: Սէիդները, որպէս ազնւականներ, որոշ տուրք են ստանում ժողովրդից, օրինակ թուրքերը պարտաւորուում են տարուայ բերքի $\frac{1}{8}$ տալ սէիդներին, իսկ հայերը, երբ մի հող են առնում թուրքից, սէիդը իրաւունք ունի ստանալ այդ գետնի արժէքի $\frac{1}{8}$ մասը: Նրանք մանաւանդ մոլեռանդ պարսիկ գիւղացու աչքում մեծ հեղինակութիւն են վայելում: Նրբ մի յանցաւոր, թէկուզ նա լինի մարդասպան, պատսպարուում է սէիդների տանը, նա միանգամայն ազատ է համարուում:

Այսպէս է նաև Պարսկաստանի «ձրիակերների դասակարգը» ինչպէս Խոյ գաւառում, նոյնպէս և ամբողջ երկրում: Նա թէև երբէք չի աշխատում, բայց և ամենից խիստ պահանջողն է, և ամենացաւալին այն է, որ ամենայն ճշտութեամբ կատարուում են այդ պահանջները:

Խոյում էլ նոր տարիֆի և սակագների առթիւ թեթև

*) Գլխահարկ վերցնում են 16 տարեկան պատանուց սկսած. այդ հասակի տէրերը արդէն համարուում են աշխատանքի ընդունակ, իսկ դրանից փոքրներից գլխահարկ չեն վերցնում:

**) Գոմշից, եղից հարկ չեն վերցնում, որովհետեւ այսպէս են բացատրում, թէ սրանք արդէն աշխատում են, և նրանց տուած արգիւնքից արդէն բաժին ստանում է աղան. կանանցից, աղջիկներից էլ գլխահարկ չեն առնում, որովհետեւ չեն աշխատում, այլ միայն ուտում են:

դժգոհութիւններ եղան, և գրգռողները բացառապէս գիւղատէր հոգեւորականները և աղա-բէգերն էին: Այսպէս է միշտ. երբ լուր է տարածուում, թէ նոր կարգեր են մտցնելու հողատիրական սիստեմի մէջ, գիւղատէրերը սարսափում են, ժողովրդին գրգռում են զանազան ծուռումուռ միջոցներով, ոտքի կանգնեցնում և բողոքում այդ կարգադրութեան դէմ: Բայց այս ամառ ժողովուրդը հասկացել էր մասամբ գործի իսկական էութիւնը և, ինչպէս շատ թուրքերից լսեցի, բողոքում էին գիւղատէրերի դէմ և խուլ կերպով մրմնջում. «դամեր օգտին է, ուզում են մեր գրութիւնը բարելաւել, մեզ դիտմամբ սրանք ոտի են հանում»: Արդեօք թուրք մասսայի գիտակցական վերաբերմունքի նշոյլներ չե՞ն դրանք...

Սոյ գաւառում գործածական պատիժներ են՝ ականջ կտրել, ֆալախկայի դնել, ճիւղտներով ծեծել ևայլն: Իւրաքանչիւր աղայի, գաւառորի քմահաճութիւնից է կախուած, թէ ո՞ր յանցանքի համար ինչ պատիժ նշանակէ: Սակայն ամենազովորական պատիժը աղաների, հէքիմների համար «տուգանքն» է. այդ կողմից շատ անխնայ, շատ անգուշ են:

Իսկ ո՞րտեղից է ժողովուրդը միջոցներ գտնում յագեցնելու համար այդ բոլոր անկուշտ որկորները: Ժողովուրդը գործ ունի հողի հետ, հողը բերրի է, լաւ բերք է տալիս, Սոյում հացահատիկները — ցորենը, գարին կորեկը — տալիս են սովորաբար մէկին 10, իսկ այդ չափը համարւում է լաւ. կան տեղեր, ինչպէս զեմիները, Ղոթուրի կողմերը, որ տալիս են 1-ին 15-25: Հողը հերկում են փոքրիկ ոսկիւններով, գութան շատ քիչ գիւղերում մուտք է գործել: Ժողովուրդը պարապում է նաև արհեստներով, ինչպէս հիւանութիւն, պալտառութիւն ևայլն, մասամբ պարապում են նաև վաճառականութեամբ, այն էլ միայն քաղաքում. շատ քիչ առևտրականներ կան, որ յարաբերութիւն են պահպանում, ապրանք բերում արտասահմանից. այդ էլ իհարկէ մեծ դժուարութեամբ և շոնորութիւններով, շնորհիւ հաղորդակցութեան կանոնաւոր և դիւրին միջոցների բացակայութեան:

Սոյը միայն մի քանի տասնեակ սաժէն երկարութեամբ շնորհքով ճանապարհ ունի, այն է դէպի Սալմաս տանող խիաւանը, մնացածներին չի կարելի ճանապարհ անունը տալ, մանաւանդ դէպի Մակու տանողը: Անշուշտ այս հանգամանքին պիտի վերագրել և այն, որ շատ տեղեր, ինչպէս և Սոյում, պոստը բերւում է ո՛չ թէ կառքով, այլ ձիով, շատ անգամ էշով և եզով: Յոյս կար, որ բելգիացիների ձեռքը անցնելով մաքսային և պոստային վարչութիւնը կը կանոնաւորուի, որոշ հի-

մունքների վրայ կը դրուէի ամեն ինչ, բայց պէտք է խոստովանուել, պոստը էլ աւելի վատթարացել է: Խոյը ունի նաև հեռագիր:

Հայերը. զաղթականութիւններ, հնութեան մնացորդներ, հայաբնակ գիւղերը. ստատիստիկայի անկատարութիւնը, հոգեւոր կառավարութիւնը—քահանաներ, առաջնորդը: Հայերի անտեսական վիճակը, գերման-հայկական որբանոցը. կրթական գործը, գրադարան-ընթերցարան:

Դեռ XVIII դարում Ատրպատականի այս անկիւնը շատ հայաշատ է եղել: Խոյի հարթութիւնը, որը համարւում է Աւարայր դաշտի շարունակութիւնը, իսկ ամբողջ գաւառը կազմում է Արտաղ գաւառի մի անկիւնը, մի ժամանակ ծածկուած է եղել մի շարք զուտ հայաբնակ գիւղերով, դրան որպէս ապացոյցներ կարող են ծառայել զանազան կողմերում ցրուած հնութեան բեկորները և մնացորդները: Ահա օրինակ՝ Քեռհաւա գիւղը, նա սրբատեղի է, կայ հայկական եկեղեցի, թէև խաբխուլ: Այդ գիւղում այժմ ոչ մի հայ չի ապրում, զուտ թուրքաբնակ է դարձել, այդ եկեղեցում, քարերի վրայ կան արձանագրութիւններ, բայց չեն կարդացւում: Ահա և Դիզա գիւղը. դա մի փոքրիկ տեղ է, բայց ունի ընդարձակ, մեծ եկեղեցի, որը երկու հարիւր տարուայ շէնք է համարւում. միայն երկու տեղ է քանդուել, բոլորովին կանգուն է մնացել և իր բարձրութեամբ իշխում է ամբողջ շրջակայքի վրայ: Դիզա գիւղից քիչ հեռու, թուրքաբնակ մի գիւղում կանգնած է հայկական եկեղեցու միայն երկու պատը. մի փոքր հեռու, Ղիմացի բլրի վրայ երևում է մի մատուռ. շատ անպաճոյճ է այդ մատուռը, բայց ժողովրդի մէջ խօսող աւանդութիւնը, որ սերնդէ-սերունդ անցնում է, մեզ ասում է, որ դա Վարդանի, քաջ Նահատակի աճիւնի հանգչելու վայրն է: Բոլորը գիտեն այդ, և ուրիշ անունով երբէք չեն կոչում այդ մատուռը: Շատ յարմար դիրք ունի նա և զիտում է առաջը տարածուող շրջակայքի վրայ: Եւ այդ մատուռի տակով ծանր, դանդաղ հոսում է Տղմուտ գետը կամ Դոթուր-չայը:

Խոյ քաղաքի բերդից դուրս, թաղում՝ կայ մի հին եկեղեցի. մի քարի վրայ եղած արձանագրութիւնը վերաբերում է միայն նորոգութեանը, իսկ եկեղեցին համարւում մի քանի հարիւր տարուայ արդիւնք: Այսպիսի մեծ, ընդարձակ եկեղեցի կայ նաև Մաճաղաւում, և բոլորն էլ ունեն արձանագրութիւններ: Շատ լաւ կը լինէր, եթէ

մի մասնագէտ գար, լուսանկարէր այդ արձանագրութիւնները մանրամասն ուսումնասիրէր հնութիւնները: Ատրպատականը, գլխաւորապէս Մակու և Խոյ գաւառները, մասամբ և Սալմաստը, կարող են այդպիսի մասնագէտ անձաւորութեան շատ հետաքրքիր նիւթեր մատակարարել:

Ի՞նչ են եղել ուրեմն հայերը: Յայտնի է, որ նրանք գաղթել են ուրիշ երկրներ: Չը հաշւած մանր աննշան գաղթականութիւնները, եղել է երկու նշանաւոր գաղթականութիւն. մէկ՝ 1805 թւին, երկրորդ, որ ամենագլխաւորն է, պարսկահայերի մեծ գաղթականութեան միջոցին, ուսու-տաճկական պատերազմի ժամանակ, 1828 թ., դրանից յետոյ համարեա այլևս չեն գաղթել, միայն մասամբ կոտորուել և ձուլուել են տեղական պատերազմի մէջ: Այժմ էլ թէև խոյեցի հայը պանդըխտում է Ռուսաստան, գնում է դարիբութեան համն առնելու, բայց էլի վաղ թէ ուշ վերադառնում է: Այս էլ ասեմ, որ այժմ աւելի քիչ են գնում պանդխտութեան:

Ի՞նչքան հայեր կան այժմ Խոյում: Շատ քիչ, միմիայն 258 տուն և դրանք էլ ցրուած են եօթ զանազան գիւղերում անապատէս:

Խոյ քաղաքում	110 տուն,	տունը հաշւելով	6 անգամ=	660 բն.
Սէյդաւար գիւղ	86 »	»	»	516 »
Մահլազան	22 »	»	»	132 »
Դիզա	18 »	»	»	108 »
Շորաւ	17 »	»	»	102 »
Վառ	4 »	»	»	23 »
Փեռա	1 »	»	»	6 »

Ընդամենը 258 տուն

1,538 բն.

Յիշուած գիւղերից Շորաւը նոր է կազմուել, 98 թւին: Այդ թւից մի տարի առաջ, յայտնի դէպքերից յետոյ, երբ Շարաֆ-բէգը կոտորեց Վառ գիւղի հայերի մի մասը, մնացածները գաղթեցին, շարժուեցին դէպի քաղաքի մօտերը, բնակութիւն հաստատեցին 20 ըռպէի հեռաւորութեան վրայ և կազմեցին այժմեան Շորաւ գիւղը: Վառեցի մի քանի ընտանիք էլ գաղթում և ապրում են Դիզա գիւղում:

Քաղաքում հայերը ապրում են «Թաղ» բաժնում և բըռնում են երեք թաղեր, կամ աւելի ճիշտ է ասել, երեք փողոցներ, այն է Փոս թաղ, Աղայի թաղ և Բիւշա-բաշի: Այս փողոցները, ուր ապրում են հայերը, բաժանուած են ուրիշ թաղերով և փողոցներով, որտեղ բռնած են թուրքերը: Այնպէս

որ բոլոր գիւղերումն էլ հայերը ապրում են խառն թուրքերի հետ, միայն Սէյդաւարն է զուտ հայաբնակ:

Ինչպէս տեսնում էք, հայերը թէ նուազ են թւով և թէ ցրուած են, և հէնց այդ հանգամանքը մեծ արգելք է լինում այնտեղ կանոնաւոր և մնայուն գործ սկսել:

Սոյը կանոնաւոր դպրոցի շէնք ունի և մեծ մասով ս. Թադէի վանքի վանահայր Նալբանդեան վարդապետի շնորհիւ, նրա ջանքերի և հետեւողութեան: Ամառը մի քանի հայի տուն կտրեցին, և շնորհիւ էլի վարդապետի եռանդոտ աշխատանքի իրերը յետ ստացուեցին: Պարսիկ կատաղած ամբոխը յարձակուում էր հայ թաղի վրայ, վարդապետը կանգնեց ամբոխի դէմ և թոյլ չը տալով խուժել հայերի տները՝ յետ դարձրեց:

Ամբողջ գաւառում միայն քաղաքը և Շորաւը ունէին քահանաներ, իսկ վերջերս էլ Նալբանդեանի կարգադրութեամբ և գիւղացիների հաճութեամբ սէյդաւարցի մի տիրացու ուղարկուեց Սևան, ձեռնադրուեց քահանայ և վերադարձաւ գիւղ: Այնպէս որ այժմ ամբողջ գաւառում կան երեք քահանաներ. երեքն էլ իհարկէ տգէտ են, գիտեն սոսկ կարդալ, իսկ գրել շատ վատ, բայց յամենայն դէպս կարող են պսակ կատարել, կնոնք անել, մեռել թաղել, ժամ ասել. հէնց այդքանով էլ բաւականնում է այս կողմի ժողովուրդը և քահանայի պարտականութիւնը միայն այդ համարում: Քահանայ չ'ունեցող գիւղերը կարիքի դէպքում բերել են տալիս քահանայ մօտիկ տեղից:

Աղքատ է Սոյի հայը. շատ ընտանիքներ, ամբողջ շարքաներ է անցնում, և տաք կերակրի երես չեն տեսնում: Ահա այս անմխիթար իրականութեան մէջ «գերման-հայկական որբանոցը» ամենայն իրաւունքով կարելի է համարել մի բարիք, այն էլ մեծ բարիք: Այս որբանոցի հիմնադիրն է գերմանացի յայտնի և հայասէր դոկտոր Լեպսիուսը: Վերջինիս ջանքերով Գերմանիայում կազմուած է մի ընկերութիւն յատկապէս հայի-րին օգնելու համար. առաջ այդ ընկերութիւնը կոչւում էր «գերման-հայկական օգնող ընկերութիւն», իսկ այժմ ասում է՝ «արեւելեան միասիրոնբրական ընկերութիւն»: Այս ընկերութիւնը Պարսկաստանում ունի երկու որբանոց, Ուրմիում և Սոյ քաղաքում: Սոյի որբանոցը առաջ Սալմաստումն էր, միայն 1898-ից տեղափոխուել է այստեղ: Այս միասիրոնբրական ընկերութիւնը որբանոցներ ունի նաև Տաճկաստանում: Այս ամառ ես երկու անգամ այցելեցի Սոյի «գերման-հայկական որբանոցը», և պէտք է խոստովանուել, որ տպաւորութիւնը շատ բաւարար էր: Որբանոցի շէնքը կառուցուած է մի ընդարձակ գետնի վրայ, որը

գտնուում է «Թաղի» հարաւ-արեւելեան անկիւնում: Առաջին հայեացքից թւաց ինձ, որ դա մի փոքրիկ գիւղ է կամ նահապետական մի մեծ բազմանդամ տուն: Ահա այստեղ մի խումբ տղաներ և աղջիկներ խաղում են, վազում, ծիծաղում, մի կողմում մանուածք են անում, այստեղ հիւսններն են աշխատում կայլն: Բակը մեծ և մաքուր է, ունի ընդարձակ պարտեզ, գեղեցիկ մարգեր. մի խօսքով արտաքուստ ամեն ինչ լաւ էր, սիրուն: Եւ այդտեղ, այդ փոքրիկ «գիւղում» ապրում էին 98 որբեր, իսկ եթէ որբանոցի «մայրիկին» և «հայրիկին» էլ հաշւենք, կը լինի ուղիղ 100: Այդ 98 որբերից 37-ը տղաներ են, իսկ 61-ը աղջիկներ: Ահա ինչու ենք ասում, որ դա մեծ բարիք է. եթէ չը լինէր այդ, քանի՜-քանի՜ որբեր կը մնային մերկ, քանի՜-քանիսը կ'ընկնէին փողոցը, կը սկսէին հաց մուրալ, քանի՜-քանի հասած աղջիկներ կ'անբախտանային: Տեղացիները, ինչպէս և ուրիշներն, այսօրայն ուրախութեամբ հարս են ընտրում որբանոցի աղջիկներին: Միակ թերութիւնը, որ ես կարողացայ նկատել, այդ այն է, որ անունը մի փոքր անբաւարար է, մէկ էլ սենեակները խոնաւ են, քնելու տեղը անյարմար և հակառուղջապահական:

Ամենաուշագրաւը «գերման-հայկական» որբանոցում արհեստանոցն է: Այդ բաժինը տարւում է շատ խնամքով և բարեխիղճ կերպով: Արհեստանոցում սովորեցնում են մի քանի արհեստներ, օրինակ հիւսնութիւն, կօշկակարութիւն, շոր գործել, չիթ, կտաւ կայլն: Հիւսնութեան վարպետն է պ. Շոռնմանը, որը գերմանացի է և հմուտ իր արհեստում. աշակերտ-հիւսները այնպիսի գեղեցիկ, մաքուր, ճաշակով կահկարասիք են պատրաստում, որ մարդ հիանում է. միշտ էլ դրանք գնահատուում և լաւ արժէքով ծախուում են: Իսկ միւս արհեստներից էլ որբերը կարողանում են պատրաստել իրանց համար հագուստ, ոտնաման: Առհասարակ ամենքն էլ իրանց յարմարեցրած աշխատանք ունին այնտեղ:

Եւ այդ ընդարձակ, բազմանդամ տան ընդհանուր կառավարիչն է պ. Օրցենը, որին որբերը «հայրիկ» են ասում, իսկ ընդհանուր կառավարչուհին միսս Հառնակը, որին կոչում են «մայրիկ»: Այս երկու անձնաւորութիւններն էլ ունեն համալսարանական կրթութիւն: Երկուսն էլ համակրելի անձնաւորութիւններ են երևում: Սրանք, իհարկէ, բացի կրօնական միասիրից ունեն նաև քաղաքական նպատակ, թէև իրանք ասում են, որ միայն մարդասիրական նպատակով են եկել Պարսկաստանի այս խուլ և հեռաւոր անկիւնը: Ճիշտ է, նկատելի է, որ ուզում են կրօնական ոգի ներշնչել սաների մէջ, այդ ազդեցութիւնը

կայ, բայց ոչ այն հափով, ինչ տեսանք թաւրիզի բողոքականներին մօտ: Այստեղ երբէք չեն առաջարկում որբերին, որ բողոքականներ դառնան:

Որբանոցի ամենաթոյլ և անբաւարար բաժինը կարելի է համարել ուսումնական-կրթական մասը: Որբանոցը ունի երեք բաժանմունքից կազմուած դպրոցական մասը. այնտեղ շատ թերութիւններ կան. դասարանների նստարանները անյարմար են, դասերի տեղութիւնը շատ երկար է, 6-7-8 տարեկաններին տրուած են 50 ընթաց տեղութեամբ դասեր. աւանդուած են երեխաների կարողութիւնից միանգամայն վեր առարկաներ, ինչպէս ընդհանուր պատմութիւն, բուսաբանութիւն ևայլն, և խեղճ երեխաները կրկնում են թուլթակի նման շատ բառեր, որոնց լմաստը իրանց խելքից շատ վեր է: Լաւ է տալ քիչ և երեխաների համար մարսելի, քան շատ բան անցնել և ոչինչ չ'իւրացնել: Ուսուցիչները այնքան էլ պատրաստուած, հմուտ չեն:

Բացի «գերման-հայկական» որբանոցի դպրոցից՝ խոյ գաւառում կայ նաև երեք դպրոց: Քաղաքում կայ երկու դպրոց, մէկը բողոքականների դպրոցն է, ուր սովորում են նաև աղջիկներ, միւսն էլ հայ-լուսաւորչականների ուսումնարանը, միայն տղայոց, ուր լինում են առհասարակ 40-50-70 աշակերտ: Երրորդ դպրոցն էլ Սէյդաւարումն է. այնտեղ էլ թուով 40-50 աշակերտներ են լինում: Երեք դպրոցների ուսուցիչներն էլ անցենդ են, միայն Սէյդաւարինը որոշ դասընթաց անցել է, իսկ խոյ քաղաքի ուսուցիչը մի պատուելի է: Նա խօսում է հին տաճկահայոց լեզուով, «ասանկ-անանկ»-ներով, մենք նոյնիսկ չենք հասկանում այդ լեզուն, ուր մնաց երեխաները:

Կրթական գործը խոյ գաւառում ընդհանրապէս անմխիթար, անբաւարար է, և հնարաւոր էլ չէ հիմնաւոր գործ սկսել, շնորհիւ հայերի ցրուած լինելուն. պիտի ասել, որ ժողովուրդն էլ շատ անտարբեր է և կթուլթեան պահանջ չի գզում: Ընթերցանութիւնն էլ նոյն վիճակի մէջ է. չը կան գրագէտներ, էլ սրտեղից կարող է լինել ընթերցանութիւն. քաղաքը միայն ունի գրադարան, աննշան քանակութեամբ գրքեր. գրադարան-ընթերցարանը կոչւում է «Ս. Նազարեան» *): Ստացւում է պարբերական հրատարակութիւններից միայն «Մշակ». բայց ո՞վ է կարդում, քանի՞ հոգի են օգտուում

*) Այդ մասին տեսէք մանրամասն «Մուրճ»-ի 1930 թ. № 2, «Ընթերցանութեան գործը Արարատական գաւառներում»:

գրադարանից. հազիւ մի երկու հոգի: Շատ անմխիթարական, յուսահատական է այդ կողմից ոչ միայն խոյը, այլ ամբողջ Ատրպատականը:

Հայերի բարբերից: Պարսիկների աղեղնութիւնը. թուրքական անուններ. հատափոխութիւնը սպառնալիք. իրար ոտի տակ փոխել. օղի ծախելը. զոդութիւններ: Նմուշներ թուրքերի բարբերից: Ներկուել. երեխան մայր:

Պարսկաստանի մի բուռն հայ ժողովուրդը ամբողջ դարերի ընթացքում ապրելով թուրքերի մէջ՝ ազդուել է նրանցից և այնքան փոխուել, որ գրեթէ չի տարբերուում իր հարևաններից. նա այնքան է նման թուրքին, որ միայն երկար տարիներ այստեղ անընթաց աչքը կարող է դժուարութեամբ ջնկել հայը թուրքից: Հայը հագնուում է ճիշտ թուրքի նման, խուզուում, ածիլուում թուրքի նման, թուրքի անուններ է կրում (Սուդավերդի, Իսաղուլի, Շահգեալդի ևայլն):

Հայերը ոչ միայն արտաքինով, այլև իրանց ամբողջ ներքին աշխարհով են նման թուրքերին: Խոյեցի հայը քաղաքագէտ է և ծածկամիտ: Խորամանկ մարդկանց մէջ դժուար թէ անկեղծ բարեկամական յարաբերութիւններ լինեն: Խոյում հէնց այդպէս է: Անկեղծութիւն ասած բանը չը կայ: Ասենք՝ այս աչքի է զարկում ոչ միայն խոյում, այլ ամբողջ Ատրպատականում: Դա պարսկահայերի և առհասարակ արևելացիների բնատրուածքան յայտնի գծերից միւն է:

Իսկ ամենացած, ամենաաշխատակալ և զայրացուցիչ երևոյթը խոյեցիների մէջ ջգրու հաւատափոխութիւնն է. վանահայրը պահանջում է խոյեցուց պտղին կամ մի բանուոր դպրոցում աշխատելու, նա զայրանում, կանչում է. «Ի՛նչ է, էդպէս էք անում, որ գնամ հաւատափոխ լինեմ. լաւ, կ'երթամ մահմէդական կը դառնամ, անուես Մկրտիչ չը լինի, թող Մահմուդ լինի, Ի՛նչ տարբերութիւն»: Թեմակալ առաջնորդը նկատողութիւն է անում խոյի քահանային, երեսով տալիս նրա թերութիւնները, քահանան զայրանում, կանչում է. «Է՛ս չէք տուել (ցոյց տալով Փարաշան), կը հանեմ կը գցեմ էն կողմը, դրա տեղը կը հագնեմ սպիտակ, իսկ սև գլխարկիս տեղ էլ կը դնեմ սպիտակ փաթոյթ»: Ահա ժողովուրդը դողաւել է առաջնորդի դէմ մի ինդրի առթիւ, շատերը հաւաքուել են, բողոք խմբագրել և տակը անպայման աւելացրել են. «Եթէ այս մեր պահանջները չ'իրականանան, մենք մահմէդական կը դառնանք»: Եւ սրանք իմ

ներկայութեամբ կատարուած ֆակտեր են, ոչ թէ երեակա-
յութեան ծնունդ...

Դրանով չի վերջանում նրանց բնաւորութեան այլանդա-
կութիւնները. նրանց մէջ խորը արմատներ է գցել իրար չ'ու-
զողութիւնը, նախանձը, իրար ոտի տակ փոս փորելու տգեղ
յատկութիւնը: Նրանց աչքը չի վերցնում, որ հարեանի գործե-
րը աշող են, ամեն խարդաւանանքներ ձեռք են առնում նրանց
շնասելու համար:

Օգեվաճառութիւնը, այդ կեղտոտ, զգուելի սովորութիւնը
այստեղ էլ կայ: Ոոյցեցի հայը ընդհանրապէս իսկական ալիո-
հոյիկ է: Գինի չի գործածում, իսկ օղին գործածական է և
թուրքերի մէջ, նրանց օղի մատակարարողը հայն է: Թուրքե-
րին քաջ յայտնի է, թէ որ տնում օղի է ծախւում, որն էլաւ,
որտեղ աժան է: Գալիս են լկտի, փշացած, սրիկայ լամուկ-
ները, ոտք կոխում հայ գերդաստանի մէջ, մնում երկար, խը-
մում և հարբում, փողոցային, թուրք լամուկին յատուկ հայհո-
յանքներ շարտում իրար, զգուելի ակնարկներ անում, նոյնիսկ
այդ տան անդամների վերաբերմամբ, երեխաների ներկայու-
թեամբ, կանանց առաջ: Կան տներ էլ, որ հէնց կանայք են
թուրքերին օղի մատակարարողները. այդ էլ մի միջոց է, ցած,
անարգ միջոց, աւելի յաճախորդներ գրաւելու համար: Ասում
են, շնորհիւ այդ տգեղ երեւոյթի՝ սրիկայ թուրքերը շատ լաւ և
մանրամասն ծանօթ են հայ տների ամեն ծակուծուկի հետ, և
անշուշտ հէնց դրան պիտի վերագրել այն, որ յաճախ գողու-
թիւններ են պատահում, կտրում են հայերի տները: Հայերը այն-
քան երես են տուել թուրքերին և իրանց ոյժը ձեռքից թողել,
որ չեն կարողանում զսպել մի լամուկի, գողում են նրանից, ո-
րովհետեւ իրանք են մեղաւոր, իրանք են ստեղծել այդ գրու-
թիւնը:

Թուրքերի մէջ ամենաաչքի զարնող և սովորական երեւոյթը
ներկուերն է: Արեւելքը զարմանալի սիրահար է սե յօնքերի:
Եւ կանայք աշխատում են ձեռք բերել այդ արհեստական կեր-
պով: Ընդհանրապէս Ատրպատականում, մասնաւորապէս Ուոյում
դուք չէք պատահի մի թուրք կնոջ, որ ներկած չը լինի յօնքը,
թարթիկանքները: Յօնքերը անճաշակ և անճոռնի ձևով հաստա-
ցընում, թանձրացնում են, բաւականին երկարացնում, ցածրացը-
նում և միացնում իրար հետ. շատ անգամ բարձրանում է յօնքը
ճակատի վրայ: Նոյն անճոռնիութեամբ վարւում են և թարթե-
ւանքների հետ և ստեղծում այլանդակ կերպարանք: Ամենա-
անսովոր աչքը անգամկարող է իսկոյն նկատել ներկուած լինելը,
այն էլ շատ հեռուից. իհարկէ՝ կան և ճաշակով ներկուողներ.

բայց դրանք միայն շատ հարուստ կանայք են, որոնք ունեն պահանջուող պարագաները և յարմարութիւնները. շատերը քսում են հէնց մատով: Այստեղ ներկւում են ոչ միայն կանայք, ոչ միայն հասակ առած աղջիկներն, այլ նոյնիսկ 4—5 տարեկան երեխան, իհարկէ աղջիկը. ներկւում են դեռ աւելի փոքրերին: Զարմանալին այն է, որ ներկւում է և պառաւը: Գուցէ մասամբ և այդ սովորութեան շնորհիւ բոլոր թուրքերի աչքերն էլ ցաւագար են, արտեանունքները և յօնքերը թափած. բացառութիւններ կարելի է համարել առողջ, գեղեցիկ աչքերը թուրքերի մէջ: Այս բանում դեր են խաղում իհարկէ՝ և ուրիշ պայմաններ ու պարագաներ, ինչպէս օրինակ հարեմական կեանքը, բաղնիքները, ու միևնոյն կեղտոտ ջրի մէջ լողանում են հիւանդն և առողջը. այդ է պատճառը, որ ճաղատութիւնը այնքան տարածուած է Պարսկաստանում:

Յաճախ թրքոհիւները մարդու են գնում 9-10-12 տարեկան հասակում:

Հետաքրքիր է թուրքի հասկացողութիւնը ամօթի մասին: Ինչպէս այստեղ, այնպէս և ամբողջ Ասորպատականում, թուրք կանայք ման են գալիս ընդհանրապէս ոտաբոքիկ. մերկ է նրանց ոտները, մերկ մինչև ազդրերը, դեռ աւելի բարձր, և դա ամօթ չի համարւում, իսկ երեսը բաց ման գալը մեծ ամօթ է: Տան մէջ պահանջուում է նոյնիսկ, որ կինը անպայման կարճ շորեր հագնի, ու ոտքերը բաց լինին:

Ղոթուր գաւառամասը.

Ղոթուրի դիրքը. նա անցեալում. սովեր և գաղթականութիւն. 1896 թիւ և Վառի կոտորած. քրդացած հայեր. Ժողովրդի պարապմունքը. հարկեր. այժմեան վիճակը:

Այժմ անցնում ենք մեր յօդուածի վերջին մասին: Խոյ գաւառի արեւմտեան կողմը Խոյ քաղաքից մօտ 10 ժամուայ հեռավորութեան վրայ պարսկա-տաճկական սահմանադրիւի մօտ ընկնում է Ղոթուրը, որ մի լեռնային գաւառակ է: Ղոթուրը ամբողջապէս շրջապատուած է բաձր և ցածր լեռնաշղթաներով, ինչպէս Ղոթուրի և Աւրուն լեռները, որոնք կազմում են անանցանելի ձորեր և կիրճեր. հէնց այդ ձորերի միջով էլ անցնում է ճանապարհը: Ահա այդ լեռներից, այդ գաւառից է սկիզբն առնում Ղոթուր նոյմբեր, 1903.

գետը, որը առատ ջուր է մատակարարում ամբողջ խոյ գաւառին:

Այժմ Ղոթուրի ազգաբնակիւթիւնը կազմուած է գրեթէ միմիայն քրդերից, «գրեթէ» եւ մասում, որովհետեւ կան նաեւ 15 տուն քրդացած հայեր: Այն, միայն քրդեր են. բայց առաջ այդպէս չէր: Դեռ ուռւ-տաճկական վերջին պատերազմից (1878) առաջ, Ղոթուր լեռնազաւառը համարւում էր Տաճկաստանի հոյ, միայն այդ պատերազմից յետոյ անցաւ պարսիկների ձեռքը: Այդ միջոցին Ղոթուր կային մեծ թւով հայեր, մօտաւորապէս 150 տուն, ամբողջ գաւառը համարեա նրանց ձեռքն է եղել, ունեցել են մեծ ուժ և տնտեսապէս էլ բարեկաւ կացութիւն: Բայց պատերազմից մի քանի տարի յետոյ վրայ է հասնում երկու անգամ սով, մէկը միւսից սարսափելի: Այլևս անհնարին է լինում մնալ այնտեղ և ապրել, ստիպուած են լինում գաղթել: Ազգաբնակիւթեան մի մասը գաղթում է Կովկաս, բնակութիւն հաստատում գլխաւորապէս Հին-Նախիջևան, Թմրուլ, Էջմիածին, իսկ մի յայտնի քանակութիւն էլ անցնում է Տաճկաստան և այնտեղ պատսպարւում: Ամբողջ գաւառակում հազիւ մնում է 40—50 տուն հայ: Վրայ է հասնում 1896 թիւը: Դուր է ստացւում, թէ Բահրի փաշայի հրամանով Շարաֆ-բէգի մարդիկ գալիս են Ղոթուրի վրայ կոտորելու հայերին: Պարսից կառավարութիւնն իսկոյն հաղորդում է այդ մասին և կարգադրում, որ շուտով հայերը հեռանան Ղոթուրից դէպի խոյ քաղաքի մօտերը: Հայերը կատարում են այդ հրամանը, թէև տհաճութեամբ և իրանց հետ վերցնելով միայն թեթև իրերը: Նրանք գալիս և բնակութիւն են հաստատում Վառ գիւղում: Անցնում է բաւական ժամանակ, յանկարծ 97 թւի օգոստոսի 31-ին, լուսադիմին, երբ ամբողջ գիւղը քնած էր, Շարաֆ-բէգի քրդերը կամացուկ սարից ցած են գալիս, յարձակւում քրնած ժողովրդի վրայ. բարձրանում է աղմուկ, աղաղակ, հրացանի ձայն, և սկսւում է սարսափելի, անգութ կոտորած, որ տեսւմ է մի քանի ժամ: Այդ կոտորածի ժամանակ սրպանւում են մօտ 30 հոգի վառեցիներ, իսկ 60—70 հոգի Ղոթուրցիներից: Կոտորածից յետոյ, երբ քրդերը կողոպտում, թալանում են ամեն ինչ և բարձրանում սարը ու հեռանում, գիւղը ստանում է կատարեալ աւերակի տեսք. կենդանի մնացածներն էլ մանաւանդ թողնում են գիւղը, գաղթում և կազմում Շորաւր:

Չը մոռանամ ասել, որ Վառի կոտորածից առաջ 15 տուն հայեր չը կարողանալով ապրել հեռու իրանց հայրենի գիւղից՝ Ղոթուրից, որը շատ գեղեցիկ տեղ է, աչքի առաջ ունե-

նալով և այն, որ պարսից կառավարութիւնը թոյլ չի տալիս նրանց ապրել այնտեղ, ստիպուեցին քրդանալ:

Այսպէս ահա այժմ Ղոթուրում կան միայն 15 տուն քրդացած հայեր, որոնք աւելի լաւ են համարել զոհել կրօնը, քան ծննդավայրը: Իսկ զոթուրցիներից մի քանիսը, որ ազատուել են կոտորուելուց, այժմ ցրուած են Խոյ գաւառում: Հէնց Խոյ քաղաքի այժմեան քահանան զոթուրցի է, որից ստացել էմ Ղոթուրի մասին տեղեկութիւնները:

Ամբողջ Ղոթուր գաւառամասում այժմ կայ 18 գիւղ, 500 տուն բնակչով: այդ գիւղերից մեծերն են Ղոթուր, Ըստիրան, Ձէրի, որոնք ունին մօտ 100-ական տուն: Ղոթուրի քրդերը շատ քաջ են, ապրում են մաքուր օդի մէջ, թառած աղատ լեռների վրայ: Յաճախ Տաճկաստանի քրդերը յարձակուում են Ղոթուրի վրայ, բայց միշտ էլ ուժեղ դիմադրութիւն տեսնելով՝ յետ են նահանջում: Ղոթուրի քրդերը միշտ էլ, ինչպէս և այժմ, հաշտ են եղել հայերի հետ, պատրաստ որոշ ծառայութիւններ կատարելու, կարիքի դէպքում օգնելու և պաշտպանելու նրանց: Այժմ հայկական ոչինչ չը կայ այնտեղ, մնացել է միայն աւերակ եկեղեցին, որը դարձել է դարմանանոց:

Ղոթուրը կառավարում է պարսից տէրութիւնից նշանակուած դատաւորը: Ղոթուրի ազգաբնակչութիւնը պարապում է երկրագործութեամբ, մասամբ անասնապահութեամբ: Նրանք ցանում են միմիայն ցորեն. հողը բերրի է, մեծ մասը դեմի և փոքր մասը ջրարբի: Ջրարբի տեղերը ընդհանրապէս տալիս են մէկին 10—12, իսկ դեմի հողերը տալիս են բաւարար անձրև եղած տարին համարեա 1-ին 20, նոյնիսկ 25, անձրև չ'եղած տարին՝ իհարկէ՝ 1-ին 5—6 էլ չեն տալիս: Բայց առհասարակ իւրաքանչիւր տարի Ղոթուրի փողովուրդը ունենում է բաւարար բերք: Յորենից զատ, մնացած անհրաժեշտ մթերքները ստանում են Խոյից:

Ղոթուրի և Խոյի հարկերի մէջ զգալի տարբերութիւն կայ: Ղոթուրը անհամեմատ աղատ է. այնտեղ չը կան աղաներ. հողը փողովուրդի սեփականութիւն է, և կառավարութիւնը վերցնում է բերքի միայն տասից մէկ բաժինը. եթէ այդպէս լինէր և Խոյում, հայերը երբէք նեղութիւններ չէին կրիլ և տնտեսապէս չէին քայքայուիլ:

Բացի հացահատիկների հարկից՝ Ղոթուրում կայ նաև գըլ-խահարկ, կենդանիների հարկ, ահա այս չափով.

Կովին (ծնած) 1 դռան, 6 շահի.

Ոչխարին » — » 8 »

Գումշին (ծնած)	 2 »	10 շահի.
Զին »	 2 »	10 »
Գլխահարկ	 3 »	— »

Եւ զըթուրցիները առանց ծանրութեան վճարում են այդ հարկերը:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

Խոյ, 1903 թ., օգ. 15.